**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.01.2020թ. թիվ 01/107.4.1/00129-2021 գրությունը, ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին » ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «բ», «գ», «դ» կետերով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի տարածքում 2021 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման, աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների պլանավորման նպատակով՝

Որոշում եմ.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի տարածքում 2021 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի
2021թ. հունվարի 27-ի թիվ 15-Ա որոշման

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառումների անվանումները | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. Կանխարգելիչ միջոցառումներ | | | |
| 1. | Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն | Համայնքների ղեկավարներ | Մինչև 15.03.2021թ. |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար: | | |
| 3. | Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մինչև 15.03.2021թ. |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | | Մշտական |
| 5. | Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն: | Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության պետ | Ամեն օր, սկսած 01.03.2021թ. |
| 6. | Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար: | Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ | Մինչև 15.03.2021թ. |
| 7. | Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար: | Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ | Մինչև 15.03.2021թ. |
| 8. | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Մինչև 15.03.2021թ. |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Մինչև 15.03.2021թ. |
| | 2. Հիմնական միջոցառումներ | | |
| 10. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Մշտապես |
| 11. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար: | Համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |
| 12. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |
| 13. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Ըստ անհրաժեշտության |
| 14. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների: | Համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |
| 15. | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի միջև: | Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ | |
| 16. | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն: | «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն | |

Դարպաս համայնքի
ղեկավարի պաշտոնակատար Արմեն Ալոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.12.2020թ. թիվ 01/107.4/11994-2020 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ,Քաղաքացիական պաշտպանության մասինե Հայաստանի հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Որոշում եմ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների» պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:
3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Դարպաս համայնքի ղեկավարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի
2021թ. հունվարի 27-ի
թիվ 16 -Ա որոշման

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| I ԱՒՆ ՓԾԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ | | | | | | |
| | | | | | | |
| 1.1 | ՀՀ վարչապետի 2014թ.սեպտեմբերի 26-ի N934-Ն որոշման համաձայն<br>Մասնակցություն Լոռու Մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխա-դրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության , մշակման և ճշգրտման , ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | հուլիս | Համայնքի ղեկավար | Համայնքի ՔՊ ղեկավար Կազմ, տարահանման հանձնաժողով | | |
| 1.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության Միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտի միջոցների՝ ՀՀ պաշտպանության Նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտի միջոցների քանակի ճշգրտմանը | Տարվա ընթացքում | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |
| II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 2.Օպերատիվ տակտիկական պատրաստություն | | | | | | |
| 2.1 Շտաբային ուսումնավարժություն | | | | | | |
| 2.1.1 | «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 14.05 | Դարպաս համայնքի ղեկավար | Դարպաս համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 3.Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ | | | | | | |
| 3.1 | Դարպաս համայնքի տարածքում գործող Փրկարարական ուժերի գույքսարքավորումների, տեխզինվածության և անձնակազմի հաշվառում և զեկույցի ներկայացում | 05.12. | Համայնքի ղեկավար | Արագ արձագանքման թիմի ղեկավար | | |
| 4.Պլանների և ծրագրերի մշակում | | | | | | |
| 4.1 | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Դարպաս համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ | Մինչև 25.12 | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ____________ Արմեն Ալոյան

անուն, ազգանուն